

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հրազդանի Օրհուս կենտրոնի 2014թ.  
Հունվար – դեկտեմբեր ամիսների  
Կատարած աշխատանքների մասին

15.12.2014

2014 թվականին Հրազդանի Օրհուս կենտրոնը շարունակել է իր արաքելությունը՝ ուղղորդվելով Օրհուսի կոնվենցիայով (տեղեկատվության մատչելիություն, հասարակության ներգրավածություն որոշումներ կայացնելու գործընթացում և արդարադատության մատչելիություն): Հավատարիմ մնալով իր արաքելությանը հարթակ է հանդիսացել քննարկումների, քաղաքացիական նախաձեռնությունների, հանդիպումների ու էկոլոգիական մշակույթի ձևավորման համար, կապող կամուրջ է հանդիսացել հասարակություն-SFU ասպարեզում, հենվելով Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնադրույթների վրա՝ նպաստել շրջակա միջավայրի պահպանությանն ու համայնքների կայուն զարգացմանը:

Հրազդանի Օրհուս կենտրոնի աշխատանքը ընթացել է ըստ «Ծառայությունների մատուցման պայմանագրի» հավելված 2-ում հաստատված տեխնիկական արաքելանքի:

✓ Հաշվետու ժամանակահատվածում Հրազդանի Օրհուս կենտրոնը գրել է գրություններ այս կամ այն զերատեսչությունների, կազմակերպել է այցեր, տարածք տրամադրել միայնակ կամ այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ իրականացրել միջոցառումներ, մասնակցել այլ միջոցառումների, ունեցել խորհրդատվական և աշխատանքային հանդիպումներ՝ թվով 39, որոնցից 4-ն ուղղված էին տեղեկատվության մատչելիությանը և հասարակության մասնակցությանը, էկոկրթությանն ուղղված միջոցառում 2, կենտրոնի համակարգողները նախաձեռնել են 2 այց Քաղսի և Ծաղկաձոր համայնքներ, 5 գրություն է ուղղվել տարբեր կառույցների : Տարածք է տրամադրվել 4 անգամ տարբեր քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, նաև եղել են աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ:



✓ Հրազդանի ՕԿ-ի համակարգողները բոլոր Օրհուս կենտրոնների համակարգողների հետ միասին, փորձագետների և էկոդաշինքի անդամների հետ համատեղ կազմակերպել և անցկացրել են իրազեկման սեմինար-քննարկում շրջակա միջավայրի խնդիրների և ոլորտին առնչվող կարևոր որոշումների կայացման ընթացակարգերի վերաբերյալ մասնավորապես. ՇՄԱԳՓ օրենքի նախագծի, հանրաարդյունաբերության ոլորտի կարգավորման վերաբերյալ՝ [http://aarhus.am/?page\\_id=3257](http://aarhus.am/?page_id=3257) :

✓ SFU և մարզային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար՝ Օրհուսի կոնվենցիայով և ազգային օրենսդրությամբ ունեցած պարտավորությունների վերաբերյալ, կենտրոնները համատեղ պատրաստում են տեղեկատվական թերթիկ, որը հետագայում կտրամադրվի համապատասխան մարմիններին: Սակայն Կոտայքի մարզի մի քանի համայնքների ղեկավարների և մարզպետարանի աշխատակիցների համար կազմակերպվել է Օրհուսի կոնվենցիայի ներկայացում:



✓ Բոլոր Օրհուս կենտրոնների հետ համատեղ մամուլի ասուլիս չի կազմակերպվել, սակայն կենտրոնը կազմակերպել է հանդիպում ուսանողների հետ, որտեղ ներկայացվել է Մևանից հավելյալ ջրբացթողումների մասին , որն էլ լուսաբանվել է “Հրազդան” հեռուստաընկերությամբ: Կազմակերպվել է նաև հեռուստաեթեր “Հրազդան” ՀՇ, որի ժամանակ ներկայացվել է Հրազդանի տարածաշրջանի բնապահպանական հիմնախնդիրները:



✓ Հրազդանի Օրհուս կենտրոնը համագործակցել է Էկոդաշինքի, Համահայկական բնապահպանական ճակատի, “Առողջ Հրազդան” քաղաքացիական նախաձեռնության հետ, փորձել է հնարավորինս տարածել մարզում առկա բնապահպանական արդյունավետ կառավարման լավագույն փորձը, առաջարկել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության արդյունավետ միջոցներ և մեխանիզմներ:

✓ Հրազդանի ՕԿ-ն նախաձեռնել և աջակցել է Էկոկրթական 2 միջոցառման կազմակերպմանը՝ ՀԿ-ների ներկայացուցիչների, ուսանողների, երիտասարդների, մարզում առկա շրջակա միջավայրի հիմնախնդիրների, ինչպես նաև Օրհուսի Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրականացման վերաբերյալ:





✓ Տեղեկատվական տարբեր միջոցներով և եղանակներով՝ կայք-էջեր, տեղեկագրեր, տեղեկատվական ստենդներ, հոդվածներ և այլն, աջակցել արկա բնապահպանական տեղեկատվության տարածմանը և հանրության լայն շրջանների իրազեկության մակարդակի բարձրացմանը՝ նպաստելով բնապահպանական տեղեկատվության հասանելիությանն ու մատչելիությանը (օգտագործելով [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքի, տեղական էլեկտրոնային ցանցերի և տարբեր ՁԼՄ-ների ընձեռած հնարավորությունները):

✓ Հրազդանի ՕԿ համակարգողները մասնակցել են հեռուստահաղորդման “Հրազդան” հեռուստաընկերությամբ՝ ներկայացնելով ՕԿ աշխատանքը, և մարզում տիրող էկոլոգիական իրավիճակը:



✓ հասարակության մասնակցության խթանման նպատակով Հրազդանի ՕԿ-ն հարթակ է ծառայել բնապահպանական թեմաներով խորհրդակցությունների, բանակցությունների և դասընթացների կազմակերպման և անցկացման համար: Կազմակերպել է խորհրդատվություն երիտասարդների, ուսանողների, ՀԿ-ների համար՝ դիպլոմային աշխատանքների, մրցույթների, ծրագրերի նախագծման հետ կապված:



✓ Հրազդանի ՕԿ-ն դիմել է բնապահպանական տեղեկատվություն տնօրինող սարքույթներին և հանրության համար կարևոր բնապահպանական հարցերի շուրջ ստացած տեղեկատվությունը տարածել այդ տեղեկատվությունն ինչպես կայքի, այնպես էլ էլ. ցանցերի միջոցով:

✓ Շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով՝ հունվար-դեկտեմբեր ամիսներին Հրազդանի ՕԿ-ների կողմից հարցում է ուղղվել իրավասու մարմիններին, ստացված տեղեկատվությունը տարածվել է:

✓ Օկ-ների գործունեությունն անընդհատ եղել է միջազգային կարույցների ուշադրության կենտրոնում.

✓ Կենտրոնների դրական փորձին տեղում ծանոթանալու նպատակով հունվարի 28-ին Հրազդանի Օրհուս կենտրոն է այցելել Շվեյցարիայի արտաքին գործերի դեպարտամենտի քարտուղար Իվ. Ռոսիեի գլխավորած պատվիրակությունը:

✓ Մարտի 28-ին ճանաչողական այցով Հրազդանի Օրհուս կենտրոն է ժամանել ԵԱՀԿ-ում, ՄԱԿ-ում և միջազգային կազմակերպություններում Շվեյցարիայի ներկայացուցչության Գլխավոր քաղաքական խորհրդական Ա. Իֆկովից Հոբները, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի Տնտեսական և բնապահպանական ծրագրի պատասխանատու Տ. Դեմբսկու ուղեկցությամբ:



✓ Հրազդանի Օրհուս կենտրոնը եռամսյակային հաշվետվություն է ներկայացրել ծրագրի ղեկավարին: Կենտրոնը հրավիրել է փորձագետների խորհրդի նիստ



✓ Հրազդանի Օրհուս կենտրոնի կողմից ընթացիկ միջոցառումների վերաբերյալ համառոտ հաշվետվություն և կյո փեր են ներկայացվել (միջոցառման արձանագրությունը, լուսանկար, գրանցման թերթիկ, տեսանյութ, օրակարգ, հայտարարություն, շնորհանդես և այլն) ծրագրի ղեկավարին և PR մենեջերին՝ ըստ սահմանված կարգի:

Անահիտ Մնացականյան  
Ժորա Առաքելյան  
Հրազդանի Օրհուս կենտրոնի համակարգողներ

